ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
ДОКЛАДЫ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ REPORTS

Հատոր Том Volume 124 2024 № 1

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 338.28
DOI: 10.54503/0321-1339-2024.124.1-49

Ակադեմիկոս Յու. Մ. Սուվարյան

Պետության զինված ուժերի կառավարման տեսական հիմնախնդիրներ

(Ներկայացված է 12/III 2024)

Բանալի բառեր. *պետական և հանրային կառավարում, զինված ուժեր, պաշտպանական գործառույթներ, ռազմավարություն, կազմակերպական կառուցվածք, տնտեսություն, գիտական և գիտատեխնիկական գործունեություն, կրթություն:*

Ներածություն: Մարդկային քաղաքակրթության զարգացման ընթացքում, պատմական փաստերի վկայությամբ, կազմակերպված զինված կառույցները կազմավորվել են պետության կայացման գործընթացում: Պատմականորեն պետության ստեղծումը իրավատնտեսագիտական գրականության մեջ միշտ դիտարկվել է որպես որոշակի տարածաշրջանում մարդկանց համակեցության և ներքին ու արտաքին անվտանգության ապահովման միջոց, իսկ պետական կառավարումը՝ հասարակական ծառայության տեսակ, որը մատուցվում է երկրի բնակչությանը, ինչի համար նա վճարում է զանազան հարկերի և այլ վճարումների ձևով: Ներկայումս շարունակում են կարևորվել ոչ միայն ներքին, այլև հատկապես արտաքին անվտանգության ապահովման մարտահրավերները, քանի որ պայքարն ազդեցության ոլորտների, ռեսուրսների տիրապետման, գերիշխանության հաստատման համար ոչ թե նվազում է, այլ աճում՝ գործադրելով ավելի կատարելագործված եղանակներ, քան սովորական ուժի գործադրումը, որ բնորոշ էր գաղութատիրության, համաշխարհային և միջպետական պատերազմների ժամանակ: Այս առումով պետության և նրա զինված ուժերի

ամենօրյա ամրապնդման խնդիրը գերարդիական է: Նույն տրամաբանությամբ երկրի զինված ուժերի կառավարման արդյունավետության բովանդակային և կառուցվածքային առումներով բարձրացումը ևս գերարդիական խնդիր է:

Սույն աշխատանքում առավելապես կլուսաբանվեն զինված ուժերի կառավարման մակրոմակարդակային՝ հիմնականում տեսական և որոշ գործնական հիմնախնդիրներ:

1. Զինված ուժերի կառավարման աստիճանական փոխակերպումը: Խորագրում նշված փոխակերպումը լուսաբանելու համար հարկ է հակիրճ ներկայացնել պետության ծագման ու գործառույթների հայտնի տեսությունները և պետական կառավարման աստիճանական զարգացման շնորհիվ հանրայինի վերաճման գործընթացի անհրաժեշտությունն ու առանձնահատկությունները:

Պետության ծագման մեկնաբանություններից, թերևս առաջինը, աստվածաբանականն է: Այդ տեսության կողմնակիցներից Թ. Ակվինացին (1225-1274 թթ.) գտնում էր, որ պետությունը, ինչպես աշխարհը, ստեղծել է աստված ([1]. էջ 54): Ի դեպ, հայ մտածողներ Մ.Գոշի և Ս. Սպարապետի կարծիքով թագավորները կարգվում են աստծո կողմից, նրա տեղապահներն են երկրում ([2]. էջ 301-305, 404-405, [3], էջ 5, 81): Մ. Գոշը միաժամանակ գտնում է, որ պետությունն ու եկեղեցին են այն երկու հիմնասյուները, որոնք պահում են հասարակության ամբողջ շենքը որպես քաղաքական իրողություն*: Այս դրույթը որոշակի քայլ էր դեպի հանրային կառավարման գաղափարի ըմբռնում, երբ բացի պետական մարմիններից կարևորվում էր մեկ այլ կառույցի՝ եկեղեցու դերը մարդկային գործունեության համակարգման համար:

Պետության ծագման և գործառույթների մեկնաբանության առումով առավել տարողունակը և հիմնավորը բնական-իրավական և դաշինքային տեսությունն է ([1], էջ 51-98, [4], էջ 22-24): Դրա հեղինակները [(Ջ. Լոկ (1632-1704), Ժ.Ժ. Ռուսո (1712-1778), Պ. Հոլբախ (1723-1789), Թ. Հոբս (1588-1679)] գտնում են, որ մարդկանց միջև ծավալվում է պայքար «Բոլորի դեմ բոլորի պատերազմ» սեփականության, ազդեցության ոլորտների համար, ինչը կանխելու նպատակով ստեղծվել է պետությունը, մարդիկ կնքել են հասարակական դաշինք, որով սահմանվել են բոլորի համար ընդհանուր կանոններ ու պայմաններ, որոնցով պաշտպանվում են անձը և նրա սեփականությունը, միաժամանակ

---

* Ուշագրավ է, որ Մ. Գոշի նշված աշխատությունը հրապարակվել է 1184 թ., իսկ Ս. Սպարապետինը՝ 1265 թ.: Հետևաբար՝ Մ. Գոշը ավելի առաջ է իր պետության ծագման աստվածաբանական մեկնաբանությամբ, քան Թ. Ակվինացին, թեև նա է համարվում այդ տեսության հեղինակը:

նախատեսվում են սահմանված կանոնները խախտելու համար պատասխանատվության եղանակներ, որոնք արտացոլվում են երկրների օրենսդրական դաշտում (սահմանադրություն, պետական օրենքներ)։ Օրինակ՝ Հին աշխարհում Բաբելոնի թագավոր Համմուրաբիի (մ.թ.ա. 1792-1750 թթ.) 282 հոդված պարունակող օրենքները, Արցախի և Ուտիքի թագավոր Վաչագան Բարեպաշտի կանոնական սահմանադրությունը (488 թ.) և այլն։

Պետության ծագումնաբանության առումով արժեքավոր դրույթներ են պարունակում բռնության և օլիգարխիական տեսությունները ([4], էջ 23)։ Ըստ առաջինի՝ պետության ծագումը բացատրվում է հասարակության մի խավի՝ հաղթող ցեղախմբի՝ մյուսների նկատմամբ բռնատիրությամբ։

Օլիգարխիական տեսության տրամաբանությամբ մարդիկ տարբերվում են մտավոր և ֆիզիկական կարողություններով, սեփականության չափերով, ինչի արդյունքում տեղի է ունենում մարդկանց աստիճանակարգում, առաջանում է էլիտար խավ, որը ղեկավարում է ամբողջ հասարակությունը, այդպիսով կայացել է քչերի (օլիգարխիայի) իշխանությունը իբրև պետական իշխանություն։

Պետության ծագման նշված տեսություններից և մարդկային քաղաքակրթության զարգացման ընթացքի դիտարկումներից բխում է առանցքային գաղափարը՝ այն, որ պետական կառավարումն աշխատանքի ուղղահայաց բաժանման արդյունք է, այսինքն՝ առանձին ցեղախմբերի և համայնքների գործունեության համակարգումից վերաճած երևույթ։ Առանձին տարածաշրջանների՝ իբրև սեփականության, մենիշխան կառավարումից առաջացել է Հին աշխարհի միապետական ժառանգական կառավարման համակարգը, որը շարունակվել է մինչև XVIII դարը, դարձել հասարակության քաղաքական կազմակերպման եղանակ՝ օժտված օրինական իշխանությամբ ու նպատակաուղղված որոշակի տարածաշրջանում մարդկանց ընդհանուր նպատակների իրագործմանը և ներքին ու արտաքին անվտանգության ապահովմանը։

Քաղաքացիական հասարակության՝ հասարակական-քաղաքական կազմակերպությունների կայացման և զարգացման արդյունքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները ձևավորվում են ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկության արդյունքում։ Այդպիսով, պետական կառավարման համակարգը վերաճում է հանրային կառավարման համակարգի՝ ներառելով պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական-քաղաքական ինստիտուտները և զանգվածային լրատվության միջոցները։ Հանրային

կառավարման գլխավոր տարբերիչ առանձնահատկությունը պետականից կառավարման մարմինների ձևավորման և կառավարման բովանդակության տիրապետող ժողովրդավարական սկզբունքներն են՝ օրենքի գերակայությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, օրինականությունը, արդարությունը, ազատական-շուկայական տընտեսավարումը, կառավարման մարմինների ընտրովիությունը: Այսպիսով, մարդկային գործունեության կանոնակարգումն ունեցել է զարգացման հետևյալ հաջորդական փուլերը՝

–ցեղախմբային կառավարում,

–համայնքային կառավարում,

–պետական կառավարում,

–հանրային կառավարում:

Ըստ էության մարդկային քաղաքակրթության զարգացմանը և տեխնոլոգիական առաջընթացին զուգահեռ բարեփոխվել են հանրության նպատակային գործունեության կառավարման համակարգերը: Համապատասխանաբար հստակեցվել են կառավարման գործառույթները և կազմակերպական կառուցվածքները:

Հանրային կառավարման գործառույթների առումով հարկ է նշել, որ դրանք ընդունված է դասակարգել երկու խմբի՝ հիմնական և հատուկ: Հիմնական գործառույթները չորսն են՝ նպատակադրում, կազմակերպում, շահադրդում, վերահսկողություն:

Հատուկ գործառույթները վերաբերում են պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտային գործունեությանը, մասնավորապես ներքին գործառույթներին՝ տնտեսական, սոցիալական, հոգևորմշակութային, բնապահպանական, արտաքին գործառույթներին՝ պաշտպանական, արտաքին տնտեսական համագործակցության, միջազգային հարաբերությունների համակարգման և այլն ([5], էջ 284-285, [6], էջ 13-17):

Պետության առաքելությունից տրամաբանական է պնդել, որ պաշտպանական գործառույթը կարևորվել է՝ սկսած ցեղախմբայինից մինչև հանրային կառավարում: Ավելին, ըստ Ն. Մաքիավելու (1469-1527 թթ.), պետությունների ուժը չափվում է նրանով, թե անհրաժեշտության դեպքում երկիրն ի վիճակի՞ է սեփական ուժերով պաշտպանելու իրեն՝ հավաքագրելով պահանջվող չափով զինական ուժ, և շահելու ճակատամարտը հակառակորդի դեմ: Եթե երկիրը (ըստ հեղինակի՝ քաղաքը) լավ պաշտպանված է, ժողովուրդը չարացած չէ, այսինքն՝ իշխանության հետ է, այն չի ենթարկվի հարձակման ([7], էջ 35): Իշխանության հիմքը թե՛ ժառանգական, թե՛ նոր և խառը պետություններում, ըստ Ն. Մաքիավելու, «լավ օրենքներն են և լավ զինված ուժը» ([7], էջ 39): Միջնադարում, ըստ նրա, պետության ղեկա-

վարի կարևորագույն հոգսերից էր ռազմական գործը և ռազմական գիտությունը, նա անգամ խաղաղ պայմաններում պետք է կարևորի զինավարժությունները, հետևի դրանց ընթացքին, ձգտի տիրապետել ռազմական արվեստին ([7], էջ 48-49)։

Անվերապահորեն, նույն այս խնդիրներն արդիական են XXI դարի պետությունների և նրանց ղեկավարության համար։

Անշուշտ, զինված ուժերի կառավարումը յուրօրինակ է իր խիստ կարգապահությամբ ու կենտրոնացվածությամբ և այս առումով ենթադրվում է, որ նրան բնորոշ է պետական կառավարումը։ Սակայն, ինչպես ակնհայտ կդառնա զինված ուժերի կառավարման գործառույթների նկարագրությունից, նրանց մարտունակությունը բարձրացնելու գործընթացին օբյեկտիվորեն, պետական մարմինների հետ համատեղ, մասնակից են դառնում տեղական ինքնակառավարման օղակները, իսկ իշխանության մարմինների գործունեության վերահսկողության առումով՝ հասարակական-քաղաքական ինստիտուտների և զանգվածային լրատվամիջոցների կառույցները։ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-14-րդ հոդվածներում ամրագրված են հանրապետության տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները պաշտպանության ոլորտում, այդ գործում կազմակերպությունների և քաղաքացիների պարտականությունները [8]։

Հետևաբար, արդի ժամանակաշրջանում զինված ուժերի կառավարումն արդյունավետ կարող է լինել, եթե դրան պատասխանատվության պարտավորվածությամն մասնակցում են հանրային կառավարման վերը թվարկված բոլոր ինստիտուտները՝ ըստ իրենց վերապահված լիազորությունների։

2. Զինված ուժերի կառավարման հիմնարար գործառույթները: Զինված ուժերի կառավարման գործառույթները պայմանավորվում են նրանց առաքելությամբ, որը սովորաբար ձևակերպվում է երկրի հիմնական օրենքով։ ՀՀ գործող սահմանադրության 14-րդ հոդվածի առաջին մասով «Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը»։ Նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրվում է, որ «յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը» [9, էջ 16]։

Զինված ուժերի նշված առաքելությունը, որի իրագործմանը պարտավոր են մասնակցել երկրի քաղաքացիները, կարող է դառնալ իրողություն հանրային կառավարման վերը նշված հատուկ գործառույթներից մեկի՝ պաշտպանական գործառույթի անվերապահ կա-

տարման արդյունքում: Տեսականորեն այդ կարևորագույն գործառույթն իրագործելու համար անհրաժեշտ է՝

–մշակել և իրականացնել հստակ և հիմնավորված պաշտպանական ռազմավարություն՝ հաշվի առնելով ոչ միայն ժամանակակից, այլև առնվազն 10-ամյա հեռանկարում կիրառվելիք նվաճումները ռազմական արվեստի և տեխնիկայի ասպարեզներում,

–գործադրել ընդունված ռազմավարությանը համապատասխան զինական ուժի կենտրոնական ու ըստ զորատեսակների և մակարդակների կառավարման արդյունավետ կազմակերպական կառուցվածք,

–մշակել և գործադրել զինված ուժերում ծառայողների պատասխանատու առաքելությանը համապատասխան շահադրդման համակարգ՝ շերտավորված ըստ կառավարման մակարդակների, պատասխանատվության աստիճանի, ծառայության բնույթի և նշանակության,

–ընդունված ռազմավարության և դրանից բխող մարտավարական խնդիրների, տարբեր մակարդակների ծառայողների պաշտոնական լիազորությունների կատարման արդյունավետության և հետադարձ կապի ապահովման համար կիրառել վերահսկողության հստակ համակարգ:

Ստորև կանդրադառնանք ռազմավարական կառավարման և ղեկավարման կազմակերպական կառուցվածքների սկզբունքային հիմնախնդիրներին:

3. Զինված ուժերի ռազմավարական կառավարումը և կազմակերպական կառուցվածքը: Կառավարման տեսության և գործարար կառավարման վերաբերյալ գիտական աշխատություններում տիրապետող է այն մեկնաբանությունը, որ ռազմավարությունը՝ իբրև գիտագործնական հասկացություն, ծնունդ է առել գործարարության ոլորտում և այնուհետև ներառվել հանրային կառավարման բնագավառ (ի դեպ, վերջինս Վ. Վիլսոնի հիմնավորմամբ), ([6], էջ 18-23): Մինչդեռ ճշմարիտն այն է, որ ռազմավարությունը և ռազմավարական կառավարումը սկզբնավորվել են ռազմական գործում: «Ռազմավարություն» եզրը հունական «Strategos» արտահայտության թարգմանությունն է, և հունարենում այն նշանակում է «գեներալի արվեստ», իսկ ռազմավարական կառավարման նպատակով Ա. Մակեդոնացու բանակում (մ.թ.ա. 336-323 թթ.) ստեղծվել է զորքի կառավարման նոր մարմին՝ շտաբը, որը միավորել է այն զորականներին, որոնք զբաղվել են ռազմական գործողությունների ռազմավարական և օպերատիվ պլանավորման խնդիրներով [10, էջ 315-317]:

Գործարարության ոլորտում ներկայումս ռազմավարությունը բնորոշվում է որպես կազմակերպության փիլիսոփայություն, որը, հաշվի

առնելով անցյալի փորձը, զարգացման օրինաչափությունները, ներքին և արտաքին միջավայրերի փոփոխությունները, արտահայտում է նրա մրցակցային նպատակները, գործողությունները և ռեսուրսների բաշխման գերակայությունները։ Ռազմավարական ծրագիրն իրագործվում է ռազմավարական կառավարման միջոցով, որը որոշումների ընդունման գործընթաց է՝ ուղղված ոչ միայն գործողությունների ծրագրավորմանը, այլ նաև դրանց կենսագործման համար կառավարման կազմակերպական կառուցվածքների և շահադրդման համակարգի ստեղծմանը, ռեսուրսների բաշխմանը, վերահսկողության ու հետադարձ կապի ապահովմանը՝ ձգտելով հարմարվել նոր իրողություններին։

Ռազմական գործում ռազմավարական ծրագրավորման և կառավարման առանձնահատկությունները դիտարկելու նպատակով վերհիշենք զինված ուժերի առաքելության և խնդիրների օրենսդրական ձևակերպումները։

ՀՀ զինված ուժերի առաքելության վերաբերյալ վերը բերված սահմանադրական ձևակերպում-պահանջը որոշակիացվել է 2017 թ. նոյեմբերի 15-ին ընդունված «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, որի 3.1. հոդվածում մեկնաբանվում է «պաշտպանություն» եզրի իմաստը, իսկ 5-րդ հոդվածում արտահայտվում դրա գործնական բովանդակությունը։ Մասնավորապես, ըստ օրենքի 3.1 հոդվածի, «պաշտպանություն» նշանակում է «ՀՀ տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և անվտանգությունը, այդ թվում՝ քաղաքացիների պաշտպանվածությունը, ռազմական սպառնալիքներից ապահովելու նպատակով խաղաղ ժամանակ և ռազմական դրության պայմաններում քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցների կիրառման ու միջոցառումների իրականացման ընդհանրություն» [8, հոդված 3.1]։ Հանրապետության պաշտպանության հատուկ գործառույթի իրագործման համար 5-րդ հոդվածում ներառված 17 միջոցառումներից են՝ ռազմական սպառնալիքի կանխատեսումը, գնահատումը, կանխարգելման միջոցառումների պլանավորումը, բարձր մարտունակություն և պատրաստականություն ունեցող զինված ուժերի, այլ զորքերի, ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը, ռազմական գործի, ռազմական գիտության և ուսուցման կազմակերպումը, անհրաժեշտ քանակությամբ զենքի և ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի, պարենի և այլ նյութական պաշարների կուտակումը ([8], հոդված 5)։ Շարադրվածից ակնհայտ է, որ ռազմական գործում ռազմավարությունը կարող է բնութագրվել իբրև երկրի պաշտպանության համալիր միջոցառումների երկարաժամկետ ծրագիր, ինչը ներառում է անհրաժեշտ նյութական ռեսուրսներով ապահովումը, որակավորված

մասնագետ կադրերի պատրաստումը, նախապես մշակված ռազմատեխնիկական գործողությունների և օպերատիվ պլանների ամբողջությունը, իսկ ռազմավարական կառավարումը* նշված համալիրի բաղադրիչների վերաբերյալ կառավարչական որոշումների ընդունումը և դրանց կատարման ապահովումն է թե՛ խաղաղ, թե՛ պատերազմի ժամանակաընթացքում (գծանկար 1)։

Գծանկար 1. Երկրի պաշտպանության ռազմավարական կառավարման գործընթացը



Նախքան պաշտպանական ռազմավարության վերաբերյալ կառավարչական որոշման ընդունումը հարկ է, հաշվի առնելով երկրի ռեսուրսային հնարավորությունները, արտաքին սպառնալիքները, թույլ և ուժեղ կողմերը (SWOT վերլուծության արդյունքում), կատարել ընտրություն պաշտպանական հայեցակարգային տարբերակներից։ Ար-

* «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում (հոդված 3.3.) մեկնաբանվել է «պաշտպանության ռազմավարական պլանավորում» եզրը՝ որպես «ռազմական անվտանգության համակարգի կարողությունների և կառուցվածքի պլանավորմանն ու զարգացմանն ուղղված համընդգրկուն, աստիճանակարգված, հեռանկարին միտված և շարունակական գործընթաց»։ Ավելի ճշգրիտ է «ռազմավարական կառավարում» արտահայտությունը, որը ներառում է պլանավորումը, ռեսուրսների բաշխումը, կառավարչական որոշումների ընդունումը և այլն։ Բովանդակային առումով օրենքի նշված հոդվածում հարկ է «ռազմական անվտանգության համակարգի» արտահայտությունը փոխարինել «զինված ուժերի պաշտպանական» ձևակերպումով։

դի ժամանակներում, երբ արհեստական բանականության մեթոդները և սարքավորումներն արագ ներթափանցում են ռազմական ոլորտ, չափազանց կարևորվում է գիտության, կրթության ու տնտեսության նշանակությունը, որովհետև այսօր, ապագայում՝ առավել ևս, վճռորոշը լինելու են ռազմարդյունաբերության համալիրի նվաճումները և դրանք ստեղծող ու գործադրող բարձր որակավորման մասնագետները։ Ուստի անհրաժեշտ է ընդունել և գործադրել ռազմական գործի այնպիսի ռազմավարություն, որի առանցքը խիստ գիտատար արտադրանքի արտադրության, ըստ անհրաժեշտության՝ նաև ներմուծման հաշվին արդիական զինական տեխնիկայով և բարձր որակավորման մասնագետներով, այդ թվում՝ զինվորական հրամանատարության, զինված ուժերի ապահովումն է։

Զինված ուժերի կառավարման և կազմակերպական կառուցվածքի հարցերին առաջին անգամ անդրադարձել եմ «Հայկական բանակ» հանդեսում (2021 թ., թ.2)։ Դիտարկելով զինված ուժերի կառավարման փորձը պատմական Հայաստանում և ներկա սահմանադրական կարգը՝ առաջարկվել է ռազմական գործի կառավարման հայեցակարգ, ինչը, մեր կարծիքով, ավելի արդյունավետ է (գծանկար 2)։ Առաջարկվող համակարգում նախորդի համեմատ ավելացվել է անվտանգության խորհուրդը՝ որպես պետության ղեկավարին առընթեր խորհրդատվական մարմին։

Մի էական դրույթ, որ հիմնավորվել է նշված հոդվածում, մեր կարծիքով, հարկ է կրկնել. պաշտպանության գործը սկսվում է խաղաղ ժամանակներից, բանակի մարտունակությունը պետք է ապահովել այդ ընթացքում, ուստի կառավարման մարմինների, հատկապես գերագույն գլխավոր հրամանատարի և սպարապետի (պաշտպանության նախարարի) լիազորությունները արդյունավետ չէ տարբերակել ըստ խաղաղ և պատերազմական իրավիճակների։

Թեև իր բնույթով Անվտանգության խորհուրդը խորհրդակցական մարմին է, սակայն ՀՀ Սահմանադրության 155.2 հոդվածով և «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8.1 հոդվածով ամրագրվում է, որ Անվտանգության խորհուրդը սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները, իրականացնում պաշտպանության ռազմավարական պլանավորում։ Ինչպես արդեն նշվել է, ռազմավարական և օպերատիվ ծրագրերի մշակման նպատակով է ի սկզբանե (Ա. Մակեդոնացու օրոք) ստեղծվել բանակի շտաբը, իսկ սպայական կազմը բաժանվել է շտաբայինի և դաշտայինի, որոնք պատրաստվում են զբաղվել կամ զբաղվում են ռազմական գործողություններով։ Ընդունվող ռազմավարությունը և օպերատիվ ծրագրերը բանակի մարտունակությունը պայմանավորող փաստա-

թղթերի, միջոցառումների և ռեսուրսների ամբողջությունն են, որը զինված ուժերի կենտրոնական հրամանատարության, հատկապես գլխավոր շտաբի գործառույթն է: Իսկ Անվտանգության խորհրդին հարկ է լիազորել՝ քննարկելու ներկայացվող ծրագրերը, հավանություն տալու ակնկալիքով, որից հետո պաշտպանական ռազմավարությունը կարող է հաստատվել գերագույն գլխավոր հրամանատարի կողմից և ընդունվել ի ղեկավարություն զինված ուժերի հրամանատարության ու շահագրգիռ կառույցների համար: Տրամաբանական է, որ պաշտպանական ռազմավարությունը պարտավոր է մշակել և իրագործել երկրի պաշտպանության համար լիազորված պետական մարմինը՝ պաշտպանության նախարարությունը՝ իր կազմում գործող գլխավոր շտաբի հետ միասին:

Գծանկար 2. Զինված ուժերի կառավարման համակարգը (բարձրագույն մակարդակ)



4. Տնտեսության, գիտության և կրթության զարգացումը՝ իբրև բանակի մարտունակության բարձրացման կարևորագույն նախադրյալներ: Յուրաքանչյուր երկիր մի վիթխարի բաց համակարգ է՝ բաղկացած մեծաթիվ ենթահամակարգերից՝ տնտեսությունից, գիտությունից, կրթությունից, ուժային կառույցներից և այլն, որոնցից յուրաքանչյուրն ամբողջի մաս է, ունի իր ազդեցությունն ամբողջի ու ենթահամա-

կարգերի զարգացման վրա, և ինքն էլ գտնվում է դրանցից յուրաքանչյուրի ազդեցության ներքո։ Ամեն մի ենթահամակարգ ունի իր նպատակները, որոնք ընդհանուր համակարգի ենթանպատակներն են, ու հենց դա էլ ապահովում է ողջ համակարգի ամբողջականությունը։ Զինված ուժերը ենթահամակարգ են, նրանց մարտունակության բարձրացումը ենթանպատակ է, սակայն շատ կարևոր ամբողջ համակարգի և նրա բաղադրիչների կայունության ու զարգացման համար։ Այս առումով հատկապես էական է տնտեսության, գիտության և կրթության ենթահամակարգերի դերակատարությունը բանակի մարտունակության մակարդակի համար։ Ավելին, կարելի է պնդել, որ զինված ուժերի մարտունակության գումարելիներն են գիտությունը, կրթությունը, տնտեսությունը՝ ռազմարդյունաբերության համալիրի տեսքով։ Միաժամանակ գիտությունը և կրթությունը յուրաքանչյուր երկրի, ինչպես նաև ազգային ու վերազգային գործարար կազմակերպությունների տնտեսական մրցունակության մակարդակը պայմանավորող չափազանց էական գործոններ են։

Եթե մինչև 15-րդ դարը գիտությունը և տեխնոլոգիաները գրեթե առանձին ոլորտներ էին, ապա սկսած 19-րդ դարից՝ դրանց կապը դարձավ անխզելի ([11], էջ 318)։

Ավելին, ներկայումս «աշխարհի ռազմական ուժերն են նախաձեռնում, ֆինանսավորում ու որոշում մարդկության գիտական հետազոտությունների մի մեծ մասի ու տեխնոլոգիական զարգացման ուղղությունը» ([11], էջ 319)։ «Վերջին հինգ դարերի ընթացքում մարդիկ ավելի ու ավելի եկան այն համոզման, որ գիտական հետազոտություններում ներդրում կատարելով, կարելի է ավելացնել իրենց կարողությունները» ([11], էջ 306, 334, 344)։ Սակայն, ըստ Հարարիի, գիտության զարգացումն ուղղորդվել է գաղափարախոսական, քաղաքական, տնտեսական ուժերի կողմից, իսկ Եվրոպայի հզորությունը պայմանավորել են գիտությունն ու կապիտալիզմը (գործարարությունը)։ Ուշագրավ է, որ եթե շուրջ 12 հազար տարի առաջ մարդկությունը հավաքչական ապրելակերպից անցել է բույսերի մշակման և կենդանիների ընտելացման, տեղի է ունեցել հողագործական հեղափոխություն, 500 տարի առաջ մարդիկ համոզվել են գիտության կարևորության մեջ, կատարվել է գիտական հեղափոխություն, իսկ 200 տարի առաջ հենց գիտության նվաճումների շնորհիվ կայացել է առաջին արդյունաբերական հեղափոխությունը, ապա այսօր և ապագայում կյանքի առաջնային հիմքը, ուղեկցվող ռիսկերով, դառնում է բանական նախագծումը (արհեստական բանականությունը), ([11], էջ 13-14)։

Մարդկային քաղաքակրթության պատմությունից բերված փաստերը հաստատում են գիտության կարևորության մասին վերը բերված

դրույթները, միաժամանակ դրանք ապացուցում են, որ գիտության զարգացումը գոնե վերջին երկու դարերի ընթացքում նպատակային քաղաքականության արդյունք է՝ ուղղորդված դեպի գործարարության մրցունակության և զինված ուժերի մարտունակության առավելագույն բարձրացումը։ Հետևաբար՝ վաղուց գիտության զարգացումը տեղի է ունենում ոչ թե պատահական-հավանական սկզբունքով, այլ երկրի տնտեսության և պաշտպանության շահերի թելադրանքով։ Այս հայեցակետից դիտարկենք մեզանում գիտության-կրթությանտնտեսության-պաշտպանության փոխառնչությունների շղթան։ Կարևորագույն այս հիմնախնդրի հետազոտությունը նկատելի է դարձնում նշված շղթայում, մեղմ ասած, առկա բացթողումները, որոնք նվազեցնում են պաշտպանական ենթահամակարգի արդյունավետությունը։

Դրանցից առաջինը համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) այնպիսի կառուցվածքն է, որը վկայում է գիտություն-տնտեսություն թույլ, ոչ ակտիվ առնչությունների մասին։ Վերջին տարիներին մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 9,4-11,1%, որում սննդի արդյունաբերությունը գերակշռող է (շուրջ 60-64%), իսկ մեքենաշինական, քիմիական արդյունաբերության բաժինը՝ 3,5-4,5%, այսինքն՝ զուտ գիտատար արտադրանքի տեսակարար կշիռը չափազանց ցածր է։ ՀՀ ԱՎԾ տվյալներով 2023 թ. տեղի է ունեցել որոշակի առաջընթաց բարձր տեխնոլոգիական գիտելիքահենք արտադրանքի արտադրության և ծառայությունների (հեռահաղորդակցություն, ծրագրային ապահովման մշակում և այլն) մատուցման ոլորտում. նման ծառայությունների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 6,6, իսկ բարձր և միջին տեխնոլոգիական գիտատար արտադրանքինը՝ 1,04 %։ Միտումը դրական է, բայց դեռևս ոչ էական։ Մանավանդ նույն ժամանակաշրջանում բարձր տեխնոլոգիական ապրանքների ներմուծումը 1,7 անգամ գերազանցում է արտահանմանը, երբ ընդհանուր ներմուծման ծավալը, ըստ բոլոր ապրանքային խմբերի, ավելի է արտահանումից 1,46 անգամ։

Աշխատանքային ռեսուրսների զբաղվածության կառուցվածքում ԱՎԾ-ի տվյալներով 2022 թ. մշակող արդյունաբերության բաժինը կազմել է 10,1, ծառայությունների ոլորտինը՝ 46,5 %, որից մեծածախ և մանրածախ առևտրում՝ 11,7 տոկոս։ Արդյունքում զբաղվածների թվում չնչին է տեխնիկատեխնոլոգիական մտավորականության (ճարտարագետներ, տեխնոլոգներ և այլն) տեսակարար կշիռը, մինչդեռ նրանք տեխնիկական առաջադիմության կրողներ են, հաճախ՝ նորարարներ։ Ծառայությունների ոլորտի զարգացումը դրական երևույթ է, բայց այն չի կարող գերադասվել արդյունաբերությունից, հատկապես ռազմար-

դյունաբերական համալիրից*։ Հազիվ թե աշխարհում լինի իբրև գերակա ուղղություն ծառայությունների ոլորտի զարգացում ունեցող երկիր, որի զինված ուժերի տեխնիկական հագեցվածությունը և մարտունակությունը համապատասխանեն արդիական պահանջներին։ Կրթության համակարգում գերակշռողը հումանիտար մասնագիտություններով սովորողներն են ([13], էջ 9-21), (նրանց թիվը 2022-2023 ուս.տարում կազմել է ավելի քան 65%), իսկ նման կառուցվածքով կրթությունը համահունչ չէ ներկայումս ընթացող տեխնոլոգիական հեղափոխությանը և նպաստավոր չէ պաշտպանական գործառույթի արդյունավետ իրագործման համար։ Ի դեպ, կրթության ոլորտում սովորողների դեֆորմացված կառուցվածքի պատճառը ստեղծված աշխատատեղերի բաշխվածությունն է, որտեղ չափազանց քիչ են արդյունաբերաարտադրական բնույթ ունեցող ճարտարագիտական-տեխնոլոգիական պաշտոնները։ Այսպիսով, հետևելով համակարգային տրամաբանությանը՝ տնտեսությունը և կրթությունը՝ իբրև ենթահամակարգեր, ցանկալի չափով չեն ներազդում մյուս ենթահամակարգի՝ զինված ուժերի մարտունակության բարձրացման վրա։

Տնտեսության նկարագրված վիճակը նվազեցնում է գիտական արտադրանքի նկատմամբ պահանջարկը, թեև գիտատեխնիկական քաղաքականությունը ևս ավելի արդյունավետ լինելու խնդիրներ ունի, քանի որ այն երկրում գործարարության և պաշտպանվածության մակարդակի բարձրացման գործընթացներում ունի նվազ դերակատարություն։ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որ ընդունվել է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին, իսկ դրանում վերջին փոփոխությունները կատարվել են 2023 թ. մայիսին, սահմանել է գիտության պետական կառավարման խնդիրները, այդ թվում՝ «գիտական, գիտատեխնիկական պետական և նպատակային ծրագրերի մշակումը, պետական պատվերի տեղադրումը» (հոդված 15ա)։ Գիտական և գիտատեխնիկական ծրագրերի պետական պատ-

* Այս հիմնախնդրի մասին քննարկումներ ծավալվել են դեռևս անկախության առաջին տարիներին։ Կար տեսակետ, որ կարելի է զարգացնել ծառայությունների ոլորտը՝ չկարևորելով արդյունաբերության զարգացումը։ Սակայն այն ժամանակ էլ այդ տեսակետը քննադատվում էր, քանի որ գիտության և կրթության շարժիչ ուժերից գլխավորը արդյունաբերությունն է, առանց դրա գիտատեխնոլոգիական ստեղծագործական միտքը չի կարող զարգանալ, հնարավոր չէ ապահովել քաղաքային բնակչության (իսկ այն հանրապետության բնակչության 70 %-ն էր) զբաղվածությունը (մանրամասն տե՛ս [12], էջ 272-277)։ Սակայն, ցավոք, օբյեկտիվ, հատկապես սուբյեկտիվ պատճառներով գործնականում հաղթեց վերը նշված անհեռանկարային հայեցակարգը։

վերի ձևավորման ու տեղադրման օրենսդրական պահանջը, որը կայուն կապ կարող է ստեղծել տնտեսության և գիտության միջև, ըստ էության չի իրագործվում: Գուցե դրա պատճառը համապատասխան կառուցակարգի բացակայությունն է, բայց այն շահագրգիռ կառույցները կարող էին մշակել: Գլխավորն այն է, որ գիտության զարգացումը և տնտեսական աճը անմիջականորեն չեն կապակցվում, նույնը վերաբերում է նաև գիտության ու զինված ուժերի տեխնիկական զինվածության և մարտունակության բարձրացման փոխառնչություններին:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորումը, ըստ նշված օրենքի 24.3 հոդվածի, իրականացվում է անկախության առաջին տարիներին մշակված բազային ֆինանսավորման եռաբաղադրիչ եղանակով (գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում, հիմնարար և կիրառական նշանակության հետազոտությունների իրականացում, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում), նպատակային-ծրագրային և գիտական դրամաշնորհային մրցութային ֆինանսավորման մեթոդներով:

Գիտության զարգացումը երկրի տնտեսության վերելքին ու պաշտպանության ամրապնդմանն ուղղորդելու, ինչպես նաև նորամուծական գործունեությունը խթանելու նպատակներով արդյունավետ կարող է լինել վերը նշված օրենքի դրույթի կիրարկումը՝ գիտական և գիտատեխնիկական ու նպատակային պետական ծրագրերի մշակումը և գիտական կազմակերպություններում իբրև պետական պատվեր տեղարումը: Վերջինիս հայեցակարգային ձևակերպման համար բավարար կարող են լինել ՀՀ բարձրագույն կրթության ու գիտության կոմիտեի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և համապատասխան գերատեսչությունների (էկոնոմիկայի, պաշտպանության, բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարությունների և այլ կառույցների) համատեղ ջանքերը՝ կանխատեսելու գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակայությունները, ըստ այդմ ծրագրավորելու հանրապետությունում հիմնարար ու կիրառական գիտության զարգացման ուղղությունները և հատկացվելիք ռեսուրսների ծավալը: Պետական պատվերի առաջադրանքների կատարումը, գիտական հրապարակումների, այդ թվում՝ միջազգային, հետ մեկտեղ կդառնան գիտական հաստատությունների և նրանց գիտաշխատողների աշխատանքի գնահատման առանցքային ցուցանիշները:

Գործող բազային ֆինանսավորման համակարգի մյուս երկու բաղադրիչները՝ գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման և զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանումը, կարող են ֆինանսավորվել այն-

պես, ինչպես նախկինում՝ գիտական կազմակերպությունների հիմնավոր հայտերի հիման վրա։

Գիտական դրամաշնորհային մրցութային ծրագրերը՝ ոչ պակաս գիտության ֆինանսավորման ողջ ծավալի 25 տոկոսից, հարկ է պահպանել, որովհետև դրանք խթանում են գիտնականների, նրանց խմբերի նախաձեռնությունները գիտական նոր ուղղությունների զարգացման ասպարեզում՝ ստեղծելով նոր գիտական պատվերների ձևակերպման, կիրառական ծրագրերի իրականացման նախադրյալներ։

Այսպիսով, գիտակազմակերպական եղանակներով ակտիվացնելով երկրում գիտություն-տնտեսություն-կրթություն ենթահամակարգերի փոխառնչությունները, ստեղծվում են կայուն և հեռանկարային հիմքեր տնտեսական զարգացման որակի և կառուցվածքի էական բարեփոխման ու պաշտպանական գործառույթի լիարժեք իրագործման համար։ Այդ ամենը միաժամանակ կհանգեցնեն գիտական արտադրանքի նկատմամբ շարունակական պահանջարկի էական աճի, ինչը կխթանի երկրում գիտական ու գիտատեխնիկական գործունեության վերելքը։

ՀՀ ԳԱԱ նախագահություն
e-mail: suvaryan@sci.am

Ակադեմիկոս Յու. Մ. Սուվարյան

Պետության զինված ուժերի կառավարման տեսական հիմնախնդիրներ

Պատմական փաստերի վկայությամբ կազմակերպված զինված կառույցները ստեղծվել են պետության կայացման ու զարգացման ընթացքում՝ երկրի հանրության արտաքին անվտանգության ապահովման և աշխարհաքաղաքական ազդեցության գոտիների ընդլայնման նպատակներով։

Պետության զինված ուժերի կառավարման գործառույթները և կառուցակարգերը պայմանավորվում են նրանց սահմանադրորեն ձևակերպված առաքելությամբ ու հանգում են հետևյալին.

–մշակել և իրականացնել հիմնավորված պաշտպանական ռազմավարություն՝ հաշվի առնելով ռազմական արվեստի և տեխնիկայի հեռանկարային նվաճումները,

–գործադրել ընդունված ռազմավարությանը համապատասխան զինական ուժի կենտրոնական և ըստ զորատեսակների ու մակարդակների կառավարման արդյունավետ կազմակերպական կառուցվածք,

–մշակել ու կիրառել զինված ուժերում ծառայողների պատասխանատու առաքելությանը համապատասխան շահադրդման համակարգ՝ շերտավորված ըստ կառավարման մակարդակների, ծառայության բնույթի և նշանակության,

–ընդունված ռազմավարության իրագործման արդյունավետության և հուսալի հետադարձի կապի ապահովման համար կիրառել վերահսկողության հստակ համակարգ։

Զինված ուժերի մարտունակության գումարելիներն են գիտությունը, կրթությունը, տնտեսությունը՝ ռազմարդյունաբերական համալիրի տեսքով, միաժամանակ վերջինիս միջազգային և հատկապես ռազմական մրցունակության մակարդակը պայմանավորում են նախորդ երկուսը։ Ուստի հարկ է ակտիվացնել նշված գումարելիների նպատակային փոխառնչությունները, առանձնապես էականորեն բարեփոխել տնտեսական զարգացման որակը և կառուցվածքը՝ ստեղծելով գիտատար, կայուն ու հեռանկարային արտադրական ներուժ՝ պետության պաշտպանական գործառույթի լիարժեք իրականացման նախադրյալներ ունենալու համար։

Академик Ю. М. Суварян

Теоретические проблемы управления вооруженными силами государства

Как свидетельствуют исторические факты, организованные вооруженные структуры были созданы в процессе становления и развития государства для обеспечения внешней безопасности страны, а также в целях расширения зоны геополитического влияния.

Функции и механизмы управления вооруженными силами государства обусловливаются их конституционно оформленной миссией и сводятся к следующему:

- разработать и реализовать обоснованную оборонительную стратегию с учетом перспективных достижений военного искусства и военной техники,
- внедрять в соответствии с принятой стратегией эффективную организационную структуру управления вооруженными силами как в целом, так и по отдельным видам войск, используя также другие организационные уровни,
- разработать и привести в исполнение систему мотивации для служащих вооруженных сил, которая должна соответствовать их ответственной миссии и дифференцироваться по уровням управления, характеру и значению служебной деятельности,
- в целях обеспечения эффективной реализации принятой стратегии и надежной обратной связи применять четкую систему контроля.

Слагаемыми боеспособности вооруженных сил являются наука, образование и экономика, особенно военно-промышленного комплекса. Следует отметить, что первые два слагаемых определяют также международную, в особенности военную, конкурентоспособность военно-промышленного комплекса. Следовательно, необходимо активизировать целевое взаимодействие вышеотмеченных слагаемых, в первую очередь существенно повысить качество экономического развития и совершенствовать его структуру, создать наукоемкий, стабильный и перспективный производственный потенциал, обеспечивающий предпосылки для полноценной реализации оборонительной функции государства.

Academician Yu. M. Suvaryan

Theoretical Issues Towards the Management of State Armed Forces

According to historical evidence, armed structures were created during the formation and development of the state, in order to ensure the external security of the country population and to expand zones of geopolitical influence.

The management functions and structures of the state armed forces are determined by their constitutionally formulated mission and result in the following:

- to develop and implement a justified defense strategy, taking into account the prospective achievements of military art and technology,
- to implement an efficient organizational structure of the central military force management, according to the adopted strategy and types of arms,
- to develop and apply a motivation system corresponding to the responsible mission of the servicemen in the armed forces, stratified according to the management levels, the nature and significance of the service,
- to apply a clear control system to ensure the effectiveness of the implementation of the adopted strategy and the reliable feedback.

Science, education and economy in form of the military-industrial complex are the important components of the military capability of the armed forces: the international and especially military competitiveness of the latter is conditioned by the previous two. Therefore, it is necessary to activate the purposeful interrelations of the mentioned important components. It is particularly important to reform the quality and structure of economic development, creating scientific, stable and perspective production potential to have prerequisites for the full implementation of the defensive function of the state.

Գրականություն

1. Теория государства и права, под. ред. проф. М.Н. Марченко, М., Зеркало – М, 2001, 624 էջ:
2. *Գոշ Մ.,*Գիրք դատաստանի, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 642 էջ:
3. *Спарапет С.* Судебник, Е., Айпетрат, 1958, 207 էջ:
4. *Чиркин Б. Е.* Государственное управление, М., Юрист, 2001, 320 էջ:
5. Մենեջմենթ, Յու. Մ. Սուվարյանի խմբ., Ե., «Տնտեսագետ», 2016, 672 էջ:
6. *Սուվարյան Յու. Մ.,* Կառավարման տեսության արդի հիմնախնդիրներ, Ե., «Գիտություն», 2020, 162 էջ:
7. *Макиавелли Н.* Государь. История Флоренции, М., Эксмо, 2010, 432 էջ:
8. ՀՀ օրենքը «Պաշտպանության մասին», http://www.irtek.am/views/act.aspx?aid=150214:
9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), Ե., «Պաշտոնական տեղեկագիր», 2019, 96 էջ:
10. *Мескон М., Альберт М., Хедоури Ф.,* Основы менеджмента. М., “Дело”, 2000, 704 էջ:

11. *Հարարի Յու. Ն.,* Sapiens: Մարդկության համառոտ պատմություն, Ե., Newmag, 2020, 512 էջ:
12. *Սուվարյան Յու. Մ.,* Տնտեսություն, գիտություն, կրթություն, Ե., «Գիտություն», 2014, 370 էջ:
13. *Սուվարյան Յու. Մ.,* Զինված ուժերի ղեկավարումը ՀՀ հանրային կառավարման համակարգում, «Հայկական բանակ», 2021 թ., թ.2, էջ 9-21: